

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԻՊ, 23 ԱՊՐԻԼ, 1932

ԹԻԻ 6

«ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»Ի ԿԻՐԱԿԻ

Միութեան ժողովին մեջ տրուած որոշումին համեմատ Յի Կիրակին նշանակուած է իբր «Նոր Աւետարեւ»ի օրը: Միութեանս անդամակցող բոլոր եկեղեցիներէն կը խնդրուի որ նոյն օրը յիշեն մեր եկեղեցական թերթը մասնաւոր կերպով մը: Կը յուսանք թէ ամէն հովիւ. այդ օր իր քարոզութեան նիւթ պիտի ընէ ասիկայ, եւ թէ՛ ժողովուրդը թէ՛ հովիւը մասնաւոր ջանք մը պիտի կատարեն թերթս աւելի ընդարձակ տրջանակի մեջ տարածելու եւ բաժանորդներու թիւը աւելցնելու մասին: Միութեան յանձնարարութեան համեմատ մեր բոլոր եկեղեցիներուն գանձանակներուն այդ օրուան հասոյթը «Նոր Աւետարեւ»ի պիտի յաւակցուին:

«Նոր Աւետարեւ» եկեղեցիներու կը պատկանի: Անիկայ մեր քարոզիչներէն մէկն է որ ամէն տուն կ'այցելէ: Անիկայ կապ մըն է որ մեր բոլոր եկեղեցիները իրարու կը կապէ, եւ միջոց մըն է ամէն ընթերցողի կէտնէր, հոգին եւ միտքը գրգռելու համար: Միշտ նոր ապացոյցներ կ'ունենանք խորհելու թէ այս թերթը օրհնութիւն մը կ'ըլլայ ուր որ կ'երթայ: Բայց թերթը կը կարօտի եկեղեցիներու զօրաւոր աջակցութեան՝ մասնաւորապէս թերթը ամէն տուն հասցնելու եւ նիւթական օգնութիւն ապահովելու մեջ:

Հ. Հ. Բիկզ
(Հրատարակիչ Մարմնի)
Ա. Պետ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ՍՔՈՒԼ ԱՎ ՐԻԼԻՃԸՆԻ» ԴԵՄ

Աղեքսանդրիայ Արև թերթը իր այս տարուան երեք թիւերուն մէջ (4010, 4012, 4013) «Վանական» ստորագրութեամբ խիստ քննադատական յօդուածաշարք մը հրատարակեց «Աթէնքի Դպրոցը Կրօնից» խորագրով:

Յարգելի յօդուածագիրը նպատակ ընտրած է ցուցնել թէ՝

1. Աթէնքի Աստուածաբանական դպրոցը «Աւետարանական անունի տակ միադաւան պրոպականդի դպրոց մ'է:

2. Դպրոցիս «հետապնդած նպատակն է քրիստոնէութիւնը Նոր Թուրքիոյ մէջ իսլամութեան հետ հաշտեցնել», «Քրիստոնէութիւնը մերձեցնել իսլամութեան, որ կը նշանակէ շեղիլ Նոր Կտակաբանի հարազատ հաւատալիքէն, ռւբանալ Քրիստոսի աստուածութիւնը, վարդապետութիւնը Ս. Երրորդութեան և ժամանակավրէպ հռչակել Նիկիական Հանգանակը»:

3. «Հայ Բողոքական եկեղեցիները Ամերիկա, Սուրիա, և Եգիպտոս զէպի միադաւանութիւն կամ Արիթոսականութիւն հակում ցոյց կուտան»։ «միադաւանութիւնը հետեւողութիւն ըլլալով Ամերիկայի արդիական կոչուած եկեղեցիներուն, Նոր Աստուածաբանութեան անունին տակ Հայ եկեղեցիին մէջ կ'ըսպառնայ պառակտումներ յառաջ բերել և խաթարել քրիստոնէական . . . բարոյականը . . . »

Յօդուածագիրը ինքզինքը ստիպուած կ'զգայ այսպէս խորհելու քանզի դպրոցը Նոր Աստուածաբանութիւն կը սորվեցնէ, որ ռւբիշ բան չէ այլ միայն ծայրայեղ քննադատական և ազատական Թիւպինկէնի դպրոցին հետեւողութիւնը, քանզի դպրոցին հաւատա-

բանութիւնը աստուածական (Theist) տէսակէտի համեմատ է և դրութեանական (Systematic) աստուածաբանութիւնը չի դառաւանդուիր:

«Վանական» կը պնդէ թէ իր ըսածները իրողութիւն են, որուն փաստերը քաղած է հետեւեալ աղբիւրներէ. —

1. Դպրոցին ծրագիրը և գործածած գիրքերը:

2. Մեքենագրուած դասախօսութիւնները:

3. Դպրոցէս ռուսումնաւարտ արտօնեալ քարոզիչները:

4. Փրոֆ. Լ. Լեւոնեանի հրատարակութիւնները, Moslem Mentality, Ասլաքիյէթ ի Տինիյէ ընդհանուր խորագրով պրակներու շարքը, «Նոր Աւետարներ» 1931 թիւ 7-8 ի մէջ «Ժողովական եկեղեցին և Հանգստականները» խորագրով յօդուածը:

5. Սուրիոյ Աւետ. եկեղեցիներու Միութեան 1931 ի Ժողովին մէջ տրուած որոշում մը:

Այս յօդուածաշարքը կարգացող մը անշուշտ պիտի տարուի խորհելու թէ յօդուածագիրը առաջին կարգի, վստահելի և առատ աղբիւրներու վրայ յենլով իբր իրազեկ կը խօսի, բայց ասիկայ պարզապէս երեւութական է:

Դպրոցին ծրագիրը, գրադարանը և դասագիրքերը, անոր փրօֆէսորները մեզի մօտէն ծանօթ են, և ինչ որ մեզի անծանօթ է վանականի սքեմին տակ պահուած յօդուածագիրն է, որ չենք գիտեր ինչ՞ա՞նչի համարձակի իր իսկութեամբ փայլիլ «Արեւոյմի անդիմակ նետուիլ «Պայքար» ի մէջ, այլ յանուն ուղղափառութեան պարզապէս կ'աղմկէ հրապարակը:

Աթէնքի Աստուածաբանական Դըպ-
րոցին Մարաշի դպրոցէն տարբերու-
թիւնը հոս կը գտնուի. առաջինին ու-
սումնական ծրագրին մէջ ընկերաբա-
նական, հոգեբանական և կրթական
ուսումները աւելի տեղ գրաւած են քան
երկրորդինին մէջ, քանզի այս գիտու-
թիւնները Պատերազմէ առաջ հիմակ-
ուան չափ և պէտք եղած կերպով զար-
գացած չէին: Դպրոցիս ուսումնական
ծրագիրը մշակելու մէջ մեծ բաժին
ունեցան Մարաշի դպրոցին վերջին նա-
խագահը Տր. Ֆ. Կուստէլ, որ Սքուլ Ավ
Րիլիճընի առաջին նախագահն էր, և
Փրոֆ. Է. Փայ՝ որ Մարզուանի դպրո-
ցին մէջ դասախօսած էր երկար տարի-
ներ: Գործածուած գիրքերուն և դա-
սագիրքերուն կարևոր մասը դասական
նկատուած հատորներ են, որոնք
ինչպէս բոլոր կարևոր դպրոցներու մէջ
նմանապէս Մարաշի դպրոցին մէջ ալ
գործածուած են: Անշուշտ ունէ մէկը
չի կրնար պնդել թի միայն որոշ մէկ
դպրոցի պատկանող հեղինակներու գիր-
քերը պէտք է գործածուին. այսպիսի
դասընթացք մը միակողմանի և հաս-
տատ հիմէ զուրկ պիտի ըլլար: Զա-
նական դպրոցներու տեսակէտները
պարզող ամէն տեսակ գիրքեր, պահ-
պանողական և քննական ազատական,
պէտք է մատչելի ըլլան ունէ ուսանու-
ղին: Սխալ է խորհիլ թէ Սֆուլ ալ
Րիլիճըն միայն արդիական նկատուած
դպրոցի գիրքերը և տեսակէտները կը
ներկայացնէ: Պահպանողական կա-
րևոր հեղինակ Օռի տեսակէտը Րիլիճեան
տեսակէտով միասին կը պարզուին:
Իսկ դրութեանական աստուածաբանու-
թեան իւր դասագիրք կը գործածուի
Տր. Քլարքի գիրքը որ ուղղափառ է և
Աւետարաններու հաւատարիմ, կ'ըն-
դունի երրորդութիւնը ևլին: (Տես.
Bulletin no. 5, of The School of Re-
ligion, էջ 26): Պէտք է յիշել թէ նոյն

այս գիրքն էր որ երկար տարիներ
Մարաշի մէջ ևս գործածուած է:

Մեքենագրուած դասախօսութիւն-
ներու մասին ալ կրնանք ըսել ինչ որ
ըսինք գիրքերու մասին: Ասոնք եւս
կը ցոլացնեն տարբեր դպրոցներու տե-
սակէտները, նոյն դպրոցի զանազան
չերտաւորումներուն՝ զազափարները:
Բայց ասիկա չի նշանակեր թէ անոնց
բոլորն ալ, ինչպէս գործածուած բոլոր
գիրքերը, անպայման դպրոցին աստ-
ուածաբանութիւնը կը ներկայացնեն:
Դպրոցին աստուածաբանութեան լա-
ւագոյն թարգմաններն են անոր ու-
սումնաւարտները և փրոֆէսորները:

Սուրիոյ և Լիբանանի Աւետ. Իկե-
ղեցիներու Միութեան այս տարուան
Ժողովին մէջ Սֆուլ ալ Րիլիճըն չորս
ուսումնաւարտները, որոնք արդէն Սու-
րիոյ վաշտին մէջ կը գործեն, հրապա-
րական քննութեան ենթարկուեցան ի-
րենց զբաւոր փափաքին վրայ: Այս
չորս երիտասարդ գործիչներու արտա-
յայտութիւնները իրենց դաւանանքին
և հոգեւոր փորձառութեան մասին՝ մե-
ծապէս գոհ թողուցին բոլոր ներկանե-
րը: Ասոնք հաստատօրէն յայտնեցին
իրենց հաւատքը Քրիստոսական ծնուն-
դին և աստուածութեան, Ս. երրորդու-
թեան, մարդը մեղքէ փրկելու համար
Յիսուսի խաչին վրայ մահուան և Անոր
իրական յարութեան (ոչ-երեւութական
կամ երեւակայական) և այլնի մասին:
Ասիկայ անակնկալ յայտնութիւն մը ե-
ղաւ նախապաշարեալ և նախապաշարող
մարդերու համար: Այս երիտասարդ-
ները—1926, 1927, և 1931 տարիներու
ուսումնաւարտները— «Վանական» ի-
րեւակայածին ճիշդ հակառակը փաստե-
ցին:

Ահա այս աշակերտները իրենց այս
յայտարարութեանց հակառակ բան մը
չեն սորված իրենց փրոֆէսորներէն, ո-
րոնց ուղղափառ դաւանանքին և խո-

րունկ հոգեւոր փորձառութեան մասին յարգանք կը տածեն միայն: Մեր սիւնակները շատ նեղ կուգան Փրոֆ. Լ. Լեւոնեանի գրութեանց մասին յարգելի քննադատի կարծիքները քննութեան առարկայ ընելու հոս: Յարգելի փրոֆէսորին իբր մօտէն ծանօթ մէկը համարձակօրէն կրնանք ըսել՝ թէ իսլամ ժողովուրդներու համար իր գրած պրակներովը երբեք նպատակ չէ ունեցած քրիստոնէութիւնը իսլամ կրօնքի մերձեցնելով նոր և այլանդակ քրիստոնէութիւն մը շինել, յարգելի յօդուածագիրը Լեւոնեանի գրութեանց մէջ իր միտքն է որ միայն կը կարգայ անշուշտ պէտք չէ մոռնալ թէ յիշուած գրուածքները քրիստոնէական վարդապետութեանց դասագիրք մը չեն: Շիտակ է որ Փրոֆ. Լեւոնեան իր գրութիւններովը քրիստոնէութեան մէջ կեանքը կը շեշտէ միշտ: Բայց ի՞նչ իրաւունքով պէտք է հզրականացնել թէ ան կ'օւրանայ վարդապետութիւնները, կամ անկարեւոր կը նկատէ զանոնք: «Նոր Աւետարներ» 1931, թիւ 7—8 յօդուածը, որուն կ'ականարկէ Վանակյան, կը հաստատէ մեր ըսածը և կը ժխտէ իր պնդածը: Հոն Լեւոնեան որոշապէս կ'ընդունի թէ կեանքն ալ դաւանանքը կարեւոր են և եկեղեցիի մասին իր յիշած երկու տեսակ վաղափարներն ալ կը պարունակեն թէ՛ կեանքը և թէ՛ դաւանանքը, բայց մէկուն համեմատփեանքը առաջին և դաւանանքը երկրորդ աստիճանէ կարեւոր է, իսկ միւսին համեմատ ճիշդ ասոր հակառակն է: Մէկուն համեմատ Քրիստոսի աստուածութիւնը պէտք է ընդունիլ հեղինակաւոր ժողովէ մը, գիրքէ մը, անհատէ մը հրամայուած ըլլալուն համար, իսկ միւսին համեմատ Քրիստոսի աստուածութիւնը պէտք է ընդունիլ անոր համար որ Քրիստոս անհատը փրկած է իր մեղքէն: Քրիստոսի աստուածութեան մասին մէ-

կուն վկայութեան աղբիւրն է արտաքին հեղինակութիւն մը, իսկ միւսին վկայութեան աղբիւրն է իր ներքին հոգեւոր փորձառութիւնը: Երկուքն ալ նոյն բանի կը վկայեն, բայց որո՞նք աւելի զօրաւոր է:

Քննադատ բարեկամը չի մոռնար չելու թէ Սուրիոյ Աւետ. Միութեան 1931ի ժողովին մէջ մինչ կ'որոշուէր Միութեան Սահմանադրութեան հետ Հաւատոյ Հանգանակն ալ տպելով հրատարակել, Սքուլ ալ Ռիլիճըն ի կողմէ կղած արտաքին ճնշումով մը անիկայ անգործադրելի մնացած է: Մեզի համար պարզապէս զարմանալի է այս տեղեկութիւնը: Բայց մենք գիտենք թէ Միութեան ժողովը մասնախումբի մը պաշտօն տուած էր հրատարակելու ոչ միայն Միութեան Սահմանադրութիւնն ու Հաւատոյ Հանգանակը՝ այլ նաև արիշ շատ բաներ (տե՛ս Միութեան տարեկան տեղեկագիր, 1931 տարի, էջ 84): Ասոնց կարևոր մասը հրատարակուած են և մնացածներն ալ պիտի հրատարակուին: Իսկ հրատարակիչ մասնախումբը, որ մեր քոյնէ է ոչ թէ Վանականի քովը, մինչև հիմա անտեղեկ է այսպիսի ճնշումէ մը:

Թերի և սխալ ծանօթութեամբ գիտուած՝ պատկառելի և օգտակար հաստատութիւն մը, անոր անձնուէր փրօֆէսորները, գործի մէջ գտնուող ուսումնականները հրապարակաւ անվստահելի, չարափառ, քրիստոնէական բարոյականը խաթարող և եկեղեցին պառակտող կոչել բացարձակապէս անհերքելի է: Այս օրերս եկեղեցական նորոյթ մ'է կարգ մը ուղղափառութեան ախոյեաններուն համար միադաւանի, չարափառի, արդիապաշտի մակդիրը փակցնել անհատներու կամ հաստատութիւններու վրայ՝ որոնց հետ թե՛ կերպով մը չեն կրնար հաշտուիլ:

Տ. Ճ. Ս.

ԿԻԼԻԿԻԱ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՑ ՕՐՈՎ

Այս նիւթին վրայ մեր տեղեկութեան գլխաւոր աղբիւրն է Նինուէի թագաւորներուն թողած բեռնագիր արձանագրութիւններն, ուր անոնք զանազան ազգերու և երկիրներու վրայ իրենց տալած յաղթութիւնները կը պատմեն: Ասոնցմէ զատ, հին յունական պատմագիրներն ու աշխարհագիրներն ալ կարգ մը ցանուցիր, այլ շատ թանկագին տեղեկութիւններ կը հաղորդեն: Այս բոլորը գեղեցիկ կերպով բացատրած ու զործածած է Maspero Հին Արեւելքի պատմութեան վերաբերեալ իր հոյակապ գործին The Passing of the Empire անուն երրորդ հատորին մէջ, պատկերներով ու քարտէսներով ալ լուսաբանուած: P. Yensen իր Hittiter und Armenier անուն նշանաւոր երկին մէջ շատ թելադրիչ էջեր՝ անի նաև Կիլիկիոյ պատմութեան այս շրջանին վերաբերեալ: Garstang ալ թէ՛ իր The Land of the Hittites և թէ՛ նորագոյն The Hittite Empire գործերուն մէջ օգտակար տեղեկութիւններ աւելուսաբանութիւններ կը հաղորդէ մեր նիւթին վրայով:

Ասորեստանեայց աշխարհակալութիւններուն դէպի արեւմուտք տարածումին մէջ երեք նպատակ կար, երեքը՝ ալ էապէս տնտեսական. (ա) Մեծ առեւտրական պողոտային տիրել ու Միջերկրականի նաւահանգիստներուն հասնիլ. (բ) Ամանոսի թանկագին տաղձի անտառներուն տիրանալ. (գ) Տաւրոսի հանքերուն, մանաւանդ արծաթահանքերուն տիրանալ: Արդարև Տաւրոս ալ ընտիր ատաղձի անտառներ ունէր և դեռ անի. բայց Ամանոս աւելի մօտ էր Նինուէի. իսկ այս ատաղձները շատ կարեւոր էին մայրաքաղաքին

մէջ կառուցուած պալատներու, տաճարներու և այլ հոյակապ շինութեանց համար: Դարձեալ, Փիւնիկէի նաւահանգիստներն Ասորեստանցւոց համար աւելի նպատակայարմար էին քան Կիլիկիոյ նաւահանգիստները, որով անոնք եթէ առաջիններուն տիրէին, մէկալներն այնչափ հոգ պիտի չընէին: Սակայն չկար եւրիշ բան մը որ Տաւրոսի արծաթահանքերուն տեղը բռնէր: Հետեւաբար, Ասորեստանեայց մինչեւ վերջ իրենց մէկ գլխաւոր քաղաքականութիւնը նկատած են Կիլիկիոյ լեռնաշղթաներուն վրայ իշխելը:

Ասորեստանեայց աշխարհակալութիւնները դեռ մինչեւ լեռնային կամ դաշտային Կիլիկիա չտարածուած, և մեծ Կիլիկեան կայսրութեան քայքայումէն յետոյ, այդ տեղերը կային կարգ մը մեծ ու փոքր իշխանութիւններ՝ Կիլիկեան, Պեդական, Լիւկիական և այլ ծագումով: Ասկէ զատ, Տրոպոլայի անկումէն ետքը Տարտանելի մօտ հաստատուած Աքայեանք, քիչ յետոյ իրենք ալ ուրիշ, բուն Հելլենական ծագումէ ցեղերու ճնշումէն ստիպուած, սկսան արտագաղթել և նորանոր գաղութներ հիմնել Պամփիլիա, Կիպրոս և Դաշտային Կիլիկիա: Այս վերջիններուն մէջ նշանակելի են Մալլոս (այժմ Կարաթաշ), Մոպսուսիա (այժմ Միսիս), և Տարսոնի ու Կիլիկեան Դրանց մէջտեղ Մոպսուկրենի: Աւելի ետքերը բուն Յունիացիք ալ հետեւեցան Աքայեանց քայլերուն:

Ն. Ք. 1300ի ատեններն արդէն կը տեսնենք որ Ասորեստանցւոց Սալմանասար Ա. թագաւորն արշաւանքներ կ'ընէ Եփրատէն անմիջապէս արեւմուտք Տաւրոսի արեւելեան ճիւղերուն մէջ բնակող Մուզրի անուն մեծ ցեղի մը

վրայ, որ կը թուի թէ ետքէն դէպի Հայաստան գաղթած է և իր անունը յիշատակ թողած Տէրսիմի Մնձուր լեռներուն: Երկու դար ետքը (ն. Ք. 1010ի առնաները) կը գտնենք որ Ասորիստանի հին աշխարհականներէն մէկը, Թագլաթ-փալասար Ա. դարձեալ արշաւանքներ կը սարքէ միևնոյն Մուզրիկներու երկրին վրայ, իսկ Մուզրիկներու կռնակը, դէպի աւելի արեւմուտք, կը բնակէր աւելի մեծ ցեղ մը Կուճանի անուն, որ իր յիշատակը թողած է Պոնտական և Կատաւոնեան երկու Կուճաններուն, երկուքն ալ փոքր Ասիոյ ամենանշաւոր սրբավայրերէն: Թագլաթփալասար Ա. ճամբայ ելաւ Մալաթիայէն, զոր քիչ առաջ նուաճած էր, և Մուզրիկները ջախջախիչ պարտութեան մը մատնեց Մուլթանսուի աղբերականց մօտ Վերանշէհրի սարահարթին վրայ: Կուճանիները 20,000 զօրքէ բաղկացեալ մեծ բանակով մը Մուզրիկներու օգնութեան փութացին, բայց իրենք ալ երկիցս յաղթուեցան Ասորեստանցիէն, նախ Ալէքսատաղ և երկրորդ անգամ Ալպիսթանի մօտ: Թագլաթփալասար ապա Արաբիսոնի, Կոկիսոնի և Հաճընի վրայէն անցնող մեծ ճամբայով արշաւեց մինչև Կոմանիներու մայրաքաղաքը Կիպչուճա, որ Մասպերոյի կարծիքով հին Կիլիկիոյ Կապեստու քաղաքն է՝ Սիսի և Փէքէի մէջտեղ: Ասորեստանցին, որ քիչ առաջ ետ մղուած էր միջին Եփրատի վրայ Հատեան մեծ կեդրոնին, Քարթամիւսի վրայ ըրած յարձակումէն եւ այսպէս չէր յաջողած հիւսիսային Սիւրիոյ մէջէն անցնելով Միջերկրականի եզերքը հասնիլ, անշուշտ նպատակ ունէր արեւելեան Տաւրոսի ձորերէն վար իջնող մեծ պողոտայով հասնիլ Կիլիկիոյ նաւահանգիստները. բայց կը թուի թէ հոս ալ իր ջանքերն ի դերեւեւ չան:

Թագլաթփալասար Ա. ի մահէն յետոյ

տոյ իշխանութիւնը տկար ձեռքերու մէջ մնաց, որով Ասորեստանցւոց հեռաւոր յաղթութիւնները կորսուեցան, եւ այսպէս Արեւմտեան Ասիա բաւական ժամանակ անդորրութիւն վայելեց: Այս շրջանին սկիզբը պատահեցաւ Լիւկիական ցեղերու արշաւանք մը Փոքր Ասիոյ խորերէն դէպի արեւելեան Տաւրոս և Ամանոս. իսկ հիւսիսային Սիւրիայէն ալ Արամէական ցեղերու հակահոսանք մը եկաւ: Այսպէս հին խեղճական և Կիլիկիան արմատէ ցեղեր երկու կողմէն ճնշուելով աւելի խտացան Անտիտաւրոսի և միջին Տաւրոսի ձորերուն մէջ և երկու ստորոտները, Ասորեստանցւոց նսեմացած այդ մէկ երկու դարու միջոցին այդ ցեղերն, արտաքին աւերիչ յարձակումներէն ազատ, կրցան իրենց մշակոյթը ծաղկեցնել, իրարու մէջ ընդհանրապէս խաղաղութիւնը պահպանելով Լիւկայոնիոյ տափաստաններէն մինչև միջին Եփրատի ափունքը: Ուստի Ն. Ք. 1000 էն մինչև 900 թուականը կեղծ—Հատեան քաղաքակրթութեան ասկեղարն է: Այս շրջանին արտադրուած են Ժարապուսի, Մարաշի, Մալաթիոյ, Ալպիսթանի գաւառին, Փատաքտիւնի, Իվրիզի և այլն կեդրոններու Հատեան կոչուած գլխաւոր յիշատակարանները, յատուկ մեհենագիւղներով:

Վերջապէս Ասորեստան վերստին արթնցաւ իր թմրութենէն: Մակայն Ասուրնազիրպալ Գ. (Ն. Ք. 883-859), որուն աշխարհակալութիւնները Թագլաթփալասար Ա.ի գրաւած երկիրներէն աւելի էին ընդարձակութեամբ, աւելի գիւրին գտաւ հիւսիսային Սիւրիան նուաճելով Փիւնիկիէի նաւահանգիստներուն վրայ տիրապետել քան թէ Տաւրոսի ապստամբ ցեղերուն հետ ընդհարիլ: Ուստի սա թէև իր նայիրեան երկրորդ արշաւանքին վերջերն (882ին) Հանձիթի ծովափին մօտերէն և խար-

բերդի դաշտէն անցնելով, յառաջացաւ մինչև Արտուշա քաղաքը, որուն տեղը կը նշանակուի այժմ Արտուֆ գիւղով Եփրատի վրայ՝ Քէպան մատենէն քիչ մը վար, սակայն չանցաւ մեծ գետը, հապա շատացաւ ստանալով տուրքերը Խանիգալթայի երկրին թագաւորներուն, որոնց մէջ ամենակարեւորն էր Մելլիտինէինը: 878 թուականին ալ, թէև Ամանոսի բարձունքը ելաւ և անկէ եղեինի, շերբինի գիհիի ու Նոճիի, կոճղեր կտրել տուաւ, սակայն չանցաւ աւելի արեւմուտք և Դաշտային Կիլիկիա չիջաւ:

Կիլիկիոյ նուաճումը վերապահուած էր Ասուրնազիրպալի որդւոյն ու յաջորդին, Սալմանասար Բ-ի (859-824): Ինչպէս նախորդ մէկ ուսումնասիրութեան վախճանին ըսած ենք, Ն. Ք. 858ին հիւսիսային Սիւրբիոյ մէջ Սալմանասարի դիմագործ երկրորդ մեծ նիւակակցութեան կարեւոր անդամներէն մէկն էր Խիլուկայի (այսինքն՝ Խիլակուի կամ Լեոնային Կիլիկիոյ) Պիսիտիւթ թագաւորը: Հոն ներկայ էր նաև Կուէի (այսինքն՝ Դաշտային Կիլիկիոյ) թագաւորն իր բանակով, սակայն գոյրաւ տաքար իր անունը եղծուած է բեւեռագիր արձանագրութեան մէջ: Թէև նիւակակիցները Որոնդէսի ստորին ափանց վրայ սոսկալի պարտութիւն մը կրեցին, բայց Ասորեստանցին այս անգամ այլ մինչև Ամանոսի գագաթը ելլելով բաւականացաւ: 854 թուականին ալ գեո, Համայի մօտ Քարքարի մեծ ճակատամարտին, Կուէի թագաւորը 500 օժանդակ զինուոր զրկած էր Դամասկոսի Բենադադ թագաւորին: 842ին՝ Սալմանասար դարձեալ Ամանոս ելաւ ատաղձ կտրել տալու: Նախ 840ին էր որ անգամ մըն ալ Ամանոսի վրայ ատաղձ կտրել տալէ յետոյ՝ իջաւ Դաշտային Կիլիկիա եւ ասպատակեց Կուէի թագաւորին աւանները մինչև Տարգի (Տար-

սոն) թագաւորանիստ քաղաքը: 839 թուականին Սալմանասար ասպատակային երկրորդ արշաւանք մ'ըրաւ Կուէի վրայ՝ քանդելով Դաշտային Կիլիկիոյ աւանները և մեծ կողոպուտ մը տանելով անկէ: Երկու տարի ետքը (837) Սալմանասար երբ Մալաթիոյ մօտ Եփրատն անցնելով՝ Տարալի երկրին վրայ արշաւանք մ'ըրաւ, այդ շրջանակի 24 արքայիկները չհամարձակեցան անոր դիմագրել, և իրենց երկրին բոլոր արծաթի բովերն ու աղուճակի և մարմարի հանքերն անոր թողլով՝ իրենց հանգըստութիւնը շատ աժան գնուած սեպիցին: Ասորեստանի թագաւորը կը յայտարարէ թէ ինք մինչև Տոււար լեռն յառաջացաւ, որ է հաւանօրէն Թոււարպայի ետեի լեռը: Սակայն Ասորեստանցին ոչ ուրեք կ'ըսէ թէ Խիլակուին ալ հնազանդութեան քերաւ: Որմէ յայտնի կ'ըլլայ թէ Լեոնային Կիլիկիոյ այդ բուն թագաւորութիւնն իր անկախութիւնը պահպանած է գեո մէկ դարէ աւելի ալ: Հետեեալ տարին (836) երբ Սալմանասար յարձակեցաւ Միլիտի Լալլի թագաւորին վրայ եւ անոր Վեդաս (այժմ Orsamlu) անուն բերդաքաղաքին տիրեց, Տարալի իշխանները դարձեալ հարկ վճարեցին Ասորեստանի:

Վերջապէս 834ին Սալմանասարձեռնարկեց Դաշտային Կիլիկիոյ դրութեան և նուաճումին: Վիշխանութեանս 25երորդ տարին, կ'ըսէ Ասորեստանի թագաւորն իր Սև Կոթողին վրայ, «Եփրատն անցայ իր յորդութեանը ժամանակ: Ընդունեցի հարկերը Խեաւացոց երկրի բոլոր թագաւորներուն: Ամանոս լեռնէն անդին անցայ: (այսինքն՝ Թերևս Գագան Ալիէն Պաղչէ տանող ճամբով) Իջայ Կուէացոց իրկրին իշխան Կասիի քաղաքներուն դէմ: Յարձակու մով տիրեցի իր Տիւնոս Բերդաքաղաքին (= Թոււրու Գալէ՝ Միսիսի մօտ) Սպաննեցի իր զինուորները: Անոնց

կողոպուտն առի տարի: Անհամար աւաններն աւերեցի, քանդեցի, կրակով այրեցի:» (Տողեր 126-130): Ստրաբոն Կոնստանտինոպոլսի բերդ մը կը յիշէ Կիւդոսի բերանին շատ մօտ, Անքիւլէի ու Տարսոնի մէջտեղ: Մաքս—Միւլէրի խիստ հաւանական մէկ կարծիքին համեմատ՝ Կուինդա էր թերեւս ամենահին ոստանը Կուէի թագաւորներուն, որոնք կ'երևի թէ ի սկզբան պարզապէս ծովահէն աւազակապետներ էին, հաւանօրէն Լիւկիական ցեղէ, եւ հետզհետէ իրենց իշխանութիւնը տարածեցին Դաշտային Կիլիկիոյ վրայ եւ Տարսոնն ալ ընտրեցին իբրեւ աւելի հանգստաւէտ ոստան մը: Հետեւեալ տարին (838) Սալմանասար յաջողեցաւ Դաշտային Կիլիկիոյ նաւաճումն ամբողջացնելու: «Տուրկայի բերդաքաղաքը, Տանակունը(այժմ Թանուֆ, Մէրսինէն իբր 25 քիլօմէթր դէպի հարաւ արեւմուտք), պաշարեցի: Տէրջոս Ասուրի փառաց սարսափն ահաբեկ ըրաւ զանի. եւ անոնք դուրս եկան, ոտքերուս փարեցան: Պատանդ-

ներ առի իրմէն:— Մեկնեցայ Տանուէն: Համենայի դաւառին դէմ արշաւեցի. (Լաւոս անուն գետ մը կար յԱպառաժաւ Կիլիկիա, եւ համանուն քաղաք մը նոյն գետին բերանը): Բընակիչները փախան, անմատչելի լեռ մը ապաստանեցան: Լեռնագագաթին վրայ յարձակում գործեցի. անոր տիրեցի: Անոնց պինդութիւնն սպաննեցի, անոնց կողոպուտը, անոնց արջառներն ու խաշինքը լեռներէն վար տարի: Աւաններն աւերեցի, քանդեցի, կրակով այրեցի, Տարզի (Տարսոն) քաղաքին դէմ արշաւեցի: Անոնք թաքերուս փարեցան: Արծաթ եւ ոսկի ընդունեցի իբր անոնց հարկը: Կատէի հղբայրը՝ Կիրրիոն անոնց վրայ խշտան կարգեցի:— Վերադարձիս Ամանոս լեռան վրայ ելայ: Եղեւինի կոճեր կտրեցի, փոխադրեցի, իմ Ասուր քաղաքս տարի:» (Սե Կթաղ, տողեր 132—141):

(Շարունակելի)

ԵՂԻԱ ՔԱՍՈՒՆԻ

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Ճշմարիտ գիտութեան ու ճշմարիտ կրօնի միջև հակառակութիւն չի կրնար ըլլալ եթէ անոնք նոյն իրականութեան մասերն են: Միայն՝ բախում կարելի է առանց-հաւատքի գիտութեան եւ առանց պիտութեան հաւատքի միջև: Կրնայ հակառակութիւն ըլլալ գիտութեան եւ կրօնի վրայ միւր անկատար զարգացող ըմբռնումներու մէջ:

Միեւնոյն Կրօնը տարբեր յարանուանութիւններու կը բաժնուի, քանզի մարդիկ միեւնոյն ճշմարտութիւնները տարբեր կերպով կ'ըմբռնեն: Ասիկայ զարգացումներու ու տեսակէտներու տարբերութիւնն է, որ յաճախ վէճի ու

բախումներու պատճառ կ'ըլլայ:

Ամէն անհատ տարբեր հագուստներ կը հագցնէ «Ճշմարտութեան», եւ կը կարծէ թէ միայն իր ըմբռնածն է «Ճշմարտութիւն»ը: Երբ ամէն անհատ միայն իր նախապաշարման ակնոցով դիտէ իր իրականութիւնը, չի կրնար ճիշդն ու իրականը տեսնել ու վճռել: Հոս է որ շատ անգամներ կը սխալինք: Դաւիթիոս երբ հեռագրատակը հնարեց ու անով դիտեց Երեւակ մոլորակը՝ անոր բոլորտիքը թաւալող արբանեակները տեսաւ: Իր բարեկամը Կոպիտնիկոսի լուր տուին ասիկայ: Կոպիտնիկոս՝ «թշ», ըսաւ, «այն տեսակ բան կարելի չէ»: Ըսին իրեն թէ

զայ ու իր աչքովը դիտէ, ու տեսնէ՝ Սակայն ինք յամառեցաւ ու պնդեց թէ «չ այդ գործիքին կը հաւատայ ո՛չ ալ անոր ցուցուցածին։ Ի՞նչ է ճշմարտութիւնը այսպէս ըմբռնենք՝ բնաւ չենք գտներ։ Ատոր համար Յիսուս ըսաւ իր բաւորաւքը նախապաշարեալ ժողովուրդին։ «Եթէ չդառնաք ու տղայ պէս չըլլաք, բնաւ պիտի չմտնէք Երկնից Թագաւորութիւնը»։

Վերջերս մեր ձեռքը անցած գրութիւնները խոնարհ հոգիով «Ճշմարտութիւնը» ցոյց տալու ու համոզելու տեղ, նիւթէն դուրս անձերու դէմ իրենց նախապաշարումները կը մատնանշէին։ Ճշմարտութիւնը ինքն իր պաշտպանն է։ Թշնամական զրպարտութիւն է ըսել թէ «Բողոքականութիւնը այս օր ձեռք քաշած է արտաքին միսիոնարութենէ, և արդիականութեան անունին տակ միադաւանութեան ի նպաստ բրթականտ կ'ընէ . . .»։ «Ճշմարտութենէ շատ հեռու է այս»։

Ներկայ «Ժայրայիդ առումով» արդիականներ կը գտնուին բողոքականաց մէջ, ու կարելի է կան մեր Հայ Աւետ. Եկեղեցիներուն մէջ ալ։ Սակայն ոչ այնչափ ինչպէս ոմանք խոշորացոյցով կը դիտեն։ Վերջովումի պէտք չկայ բռնաւ։ Մեր արեւելեան ժողովուրդը իր հաւատալիքը, կրօնական համոզումը այնչափ դիւրաւ չի փոխեր։ Մանաւանդ պէտք եղածին չափ իսկ չի բարեփոխեր։ Տե՛ս։ Մեր Մայր Եկեղեցիին մէջ բարեկարգութեան պէտքը շատ դարերէ ի վեր զգացուած ու շեշտուած է, ու ամէն օր կը ծեծուի։ Ո՛ր է բարեփոխում, ո՛ր է քիչիկ մը արդիացում ժամանակին պահանջին համեմատ։ Այս պէտքը քանիցս շեշտուած է էջմիածինէ, Երուսաղէմականներէ, ու Պոլսոյ պատրիարքներէն սկսեալ ամէն բանիմաց մարդոց կողմէ։ Տե՛ս, Եւրոպայի երկրներէն։ Ինչպէ՞ս կարելի է որ նոյն ազգին միւս

հատուածին, Աւետարանականներուն մէջ՝ Արեւմտեան եկեղեցիներէ իսկ չընդունուած ու յարձակման ենթարկուած «Ծայրագոյն արդիականութիւնը» մօտ գտնէ։ Ոչ բնաւ։ Պէտք չկայ աղմկարարութեան, ու վախի։

Իբր փաստ մեր վերը յիշածին ըսենք որ մեր արդի Աւետարանական եկեղեցիները հարիւր տարի առաջուան մեր հայրերուն չափ արդիականութիւն ցոյց տուած չեն ցարդ։ Անոնք այդ ատենուան արդիականներն էին, և անոր համար հալածուեցան և ստիպուեցան բաժնուելու։ Սակայն աւետարանականները անկէ ասդին ո՛ւր որ եղած են հոն մնացած են, ամերիկեանաց եկեղեցի մը եղած է քան թէ Հայաստանեայց Աւետարանական եկեղեցի մը, որ կարելի էր՝ առնելով Մայր Եկեղեցիին շարականները, շատ մը աղօթքները . . . և վարչաձեւին մօտեցած բան մը։

Այնչափ պարզամիտ ու դիւրահաւան գտնուելով անտեղի կերպով իրաւութեւ յարձակիլ և զիրար դատափետել եկեղեցիին վնասակար է։ Խնայեցէ՛ք Քրիստոսի Եկեղեցիին որ իր արիւնով գնուած է։

«Գրիչը ուրիշ ազգաց մէջ կը ծառայէ իբր ուղեցոյց և առաջնորդ՝ մեր մէջ եղած է մոլորանքի, պառակտումի փորձանաւոր միջոց մը», կ'ըսէ Մարտիանի Քէն «Պայքարի մէջ»։

«Մամուլի գործիչները ինչպէ՞ս կ'ընեն ժողովուրդը լուսաւորելու կոչուումը արդարացնել՝ երբ չեն ենթարկուիր զուսպ լեզուով վիճաբանութիւն վարելու ու գատ մը պաշտպանելու պայմանին»։

Մամուլը՝ որ կոչումն ունի բարձր բեմ մը ըլլալու իբր կըթիչ ու գաստիարակիչ ազգակ՝ ինչպէ՞ս կ'ընայ թոյլատրուիլ որ ապերասան լեզուով թշնամական յարձակումի փոխէ բոլոր վէճերն ու խնդիրները որ կը մղուին զրական,

գիտական, ընկերական կամ եկեղեցական մարզերու մէջ: Ա՛յ սկզբունքի հարցեր չեն որ կան հրապարակի վրայ որոնց շուրջը շարժէին գրիչները դատի մը պաշտպանութեան ոգիով, այլ անձնական թշնամանքի անվերջ գինակցութիւններ. . . Միշտ ալ յանուն ճշմարտութեան, ազգասիրութեան ու կրօնասիրութեան»

Ահա ա՛յս պատճառաւ կարող գրիչներ լռութիւնը նախամեծար կը համարեն կարեւոր խնդիրներու շուրջ, ու ա-

կամայ կը դատապարտուին անգործութեան:

Մենք կ'ուզենք անխտրական ու աննախապաշարեալ ոգիով ձեռք առնել այժմէական այս հարցը, արդիականութիւնը, և թարգմանը ըլլալ հեղինակաւոր մարդոց գաղափարներուն: Պէտք է վերապահութեամբ մօտենալ խնդրին, ու ուսումնասիրութեան նպատակաւ միայն, ու ծանրաշարժ ըլլալ բացարձակ վճիռ արձակելու մէջ:

Նիւ Սորֆ

Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ՀՈՌՈՎՄ

Գ.

ՀՈՌՈՎՄԷԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

Հոռով մէջ մասնաւորապէս և Հրոռովէական կայսրութեան մէջ ընդհանրապէս ընտանիքը շատ թղթալի վիճակի մը մէջ կը գտնուէր, երբ Յիսուս ծնաւ: Քրիստոսնէութեան կատարած ազնուացուցիչ և բարձրացուցիչ դերը գնահատելու համար բաւ է գաղափար մ'առնենալ Հոռովմայեցի հօր բռնապետական իշխանութեան և կնոջ նուաստացուցիչ դիրքին մասին:

Ներկայ ժամանակի հօր մը համար զժուար է հասկնալ Հոռովմայեցի հօր մը ձեռքը պանծող բռնակալական մեծ ոյժը: Հոռովմայեցի հայրը կրնար իր զաւակը ծնծել, շղթայել, աքսորել, իբր գերի ծախել և նոյնիսկ սպաննել օրէնքի տրամադրած իրաւասութեամբը: Անիկայ իր զաւակներուն ստացուածքին ամէն մէկ գահեկանը կրնար հակալռել, իր որդիներուն համար կիներ և զուստրերուն համար էրիկներ գտնել և զանոնք իր քմահաճոյքին համեմատ իրարմէ զատել: Հոռովմայեցի զաւակը օրինապէս հոռովմայեցի գերիէն աւելի

ստորին վիճակ մ'առնէր: Մանդիոս իր զաւակը սպաննեց իր հրամաններուն չհնազանդելուն համար: Կասիոս Բրուտոս իր արդւոյն մահավճիռը գործադրեց թշնամիի հետ հաղորդակցած ըլլալուն համար: Զաւակները իրենց զայրացած ծնողներուն կողմէ փողոցներու մէջէն քաշկուտուելով կ'առաջնորդուէին խարազանով ծնծուելու վայրերը, մինչ Հոռովմայեցի պարոններն քարացած սիրտով կը գիտէին: Պօղոս անունը Ստոյիկեան իրաւագէտ մը կը պատմէ թէ Հոռով մէջ հայր մը կատարեալ իրաւասութիւնն ունի հնչուն դրամով ծախելու իր զաւակը մեծ կարօտութեան տանն:

Եթէ ներկայ հօր մը համար դժուար է հասկնալ դարեր առաջ ապրող հօր մը գիրքը, ներկայ մօր մը համար գրեթէ անկարելի է ըմբռնել հին Հոռով մի մօր և կնոջ գիրքը: Անիկայ շատ հեռի էր յարգանքի արժանի նկատուելէ, անիկայ հազիւ դատապարտուած արճրագործի մը իրաւունքին ունէր:

Այս բերքը կ'արհամարհէին կիներ, զոր անարժան կը գտնէին մտածումի առարկայ իսկ ընելու:

«Կնոջ ամուսնութիւնը կատակ մըն էր: Անոր ամուսնութեան առթիւ անիմաստ արարողութիւններէն որն ալ կատարուէր տարբերութիւն չէր ընէր, անիկայ իր էքիկին ստացուածքը կ'ըլլար, և իբր օրիորդ իր ունեցած բոլոր իրաւունքները կը զոհէր: Անիկայ «առարկայ» մ'էր, որ իր տան ունէ կարասիին նման կրնար ծախուիլ և գնուիլ և վերաբերուիլ: Ամուսնալուծումը ամենայայտ գայթակղութիւն մը դարձեր էր: Սենեկայ, որ Առաքեալներու ժամանակակից էր, «օրական ամուսնալուծումներու» մասին կը խօսի: Ան կ'ըսէ թէ Հռովմայեցի Մեկենթոս հազար անգամ ամուսնացած է: Նոյն ինքն մեծն Կիկերոս իր կիներ մերժեց գինքը չփոթեցնող պարտքերէն ազատելու համար և Պաւլոսի իսկ հետ ամուսնացաւ, զոր եւս գրեթէ անմիջապէս ձգեց: Կ. Գաղղոս իր կիներ թողուց փողոցին մէջ բաց զլիւծ վատրած ըլլալուն համար: Լաւ ընտանիքէ սերած կիները իրենց տարիքը կը հաշուէին իրենց ամուսնացած եւ ապա թողած էրիկներուն թիւովը: Կին մը ութ տարուան միջոցին հինգ անգամ ամուսնացած էր: Ս. Յերոմինոս կը պատմէ կնոջ մը մասին որ իր քսաներորդ ամուսնին հետ ամուսնացած էր:

«Հռովմայեցի մօրմէն կ'ակնկալուէր որ զաւակներ ծնանի, բայց անոնց կրթութեան մէջ երբեք ձայն պէտք չէր ունենալ, անոնց վարքը կառավարելու մէջ իշխանութիւն պէտք չէր ունենալ: Զաւակները ամուսնութեան պարագային իրենց մօրը հետ խորհրդակցութեան մասին չէին խորհեր իսկ. քանզի անոնք օրէնքէն սորված էին որ մայրը իրենց մէկ զերազասը չէր այլ մէկ քոյրն էր: Մօրը բոլոր շահածները եւ ստացուած-

քը, ինչպէս նաեւ իր զաւակներունը ընտանիքին հօրը կը պատկանէին: Այրը կնոջ տէրն ու իշխանն էր: Այրը զոյգ չափանիշի կատարեալ մէկ օրինակն էր. այսինքն կիներ իր ուղած ոչ մէկ բանը կրնայ ընել, իսկ այրը՝ իրեն հաճելի թուած ամէն բան: Յոյն եւ Լատին գրականութիւնը լեցուն է այլ մարդուն ամօթալի արարքներուն արձանագրութիւններովը, անքնական մութ իւրեաներու հետքերովը:»

Քրիստոսի կրօնքը անա այսպիսի աշխարհի մը մէջ սկսաւ մուտք գործել: Քրիստոսի աշակերտները եկան Քրիստոսով պատուաստել ընկերային այսքան ինկած կեանքը: Քրիստոնէութիւնը, որ կը քարոզէր թէ մանուկը իր երկրային հօրմէն զատ կը պատկանի նաեւ Աստուծոյ, թէ «Քրիստոսի ժառանգակիցներ» են, և թէ Աստուծոյ առջեւ իր հօրը հաւասար արժէք ունի, մահացու հարուած մը տուաւ հայրական բռնատիրութեան: Քրիստոսի Աւետարանը, որուն համեմատ բաց ի պոստկութեան պարագայէն ամուսնալուծումը թոյլատրելի չէ և Աստուծոյ առջեւ այրը և կինը հաւասարապատիւ են, երբ սկսաւ քարոզուիլ կայսրութեան սահմաններուն մէջ եւ մայրաքաղաքը՝ ընտանիքը սուրբ հաստատութիւն մը դարձաւ, ամուսնութիւնը աչ թէ կատակ մը, այլ սուրբ խորհուրդ մը եւ անքակտելի կենակցութիւն մը եղաւ:

Աւետարանի ազդեցութեամբը հոսմէական օրինակիւքը հիմնական սրբազրութեան ենթարկուեցաւ առաջին քրիստոնեայ կայսեր Կոստանդիանոսի և ապա Յուստիանոս կայսեր եւ Գրեց յաջորդներուն միջոցաւ: Եւ զաւակն ու կինը իրենց ներկայ բարձր գիրքին տիրացան այսպէս, քրիստոնեայ և քաղաքակիրթ երկիրներու մէջ:

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Հիւսիսային Ափրիկէի մէջ մարդկային գանկ մը գտնուած է որ մանրագրէնին քննութենէ ետքը տեսնուած է որ 25,000 տարեալ հնութիւն մը ունի: Շատ կարեւոր նկատուած են այս գանկերը որոնք նախապատմական մարդոց ֆիզիքական կազմի մասին գաղափար կուտան: Այս գանկը Մէքթա Էլ Արպի կը կոչուի: Մէքթա Էլ Արպի ցեղ մըն է որ Ն. Ք. 30,000—40,000 տարիներ առաջ ապրած է և որ դարերու ընթացքին բնաջնջուած է:

Անգլիացի օդանաւորդ մը, Արաբիոյ անապատին վրայէն թռչած ժամանակ արաբական հին քաղաքներ նշմարեց, որոնք գրեթէ ներկայ աշխարհի քաղաքակրթական մակարդակին կը հասնին: Այս քաղաքները տակաւին անծանօթ էին քաղաքակրթեալ աշխարհին, բայց վերջերս չորս Եւրոպացիներ կրցան հոն մտնել: Վեց կամ եօթը յարկով տաճարներ կը գտնուին հոն, նաեւ դեղեցիկ և հարուստ ամառանոցներ և ճեմելիքներ (verandas) որոնց ճարտարապետական նուրբ արուեստը քիչ կարելի է գտնել արաբական միւս քաղաքներուն մէջ: Զարմանալին այն է որ հոն օթոներ ալ կան որոնք տեղացիներէն կտոր առ կտոր ուղտերու վրայ բերուած են: Տեղացիները տաճար տեղ կ'երթան, սակայն թե՛ օտար ներս չեն ընդունիր: Այս քաղաքները Հատրամօթ անունով հովիտի մը մէջ կը գտնուին, որ ինչպէս Հին Կտակարանէն գիտենք՝ ասոնք նշանաւոր խաւնկի և զմուռսի վաճառականութեան կեդրոն եղած է: Աւելին կ'ւզէ՞ք: Յիշուած քաղաքներէն ուրիշ շատ կեդրոններ ալ կան, սակայն մինչև հիմա թե՛ մարդ չէ համարձակած հոն երթալ:

Մէքսիկոյի նոր պեղուած դամբարաններուն մէջ անծանօթ ցեղի մը մեհենագրութիւնները երևան ելան: Այս ցեղը ինքնատիպ քաղաքակրթութիւն մը մշակած է, բայց տակաւին յայտնի չէ թէ այս քաղաքակրթութիւնը ո՞ր մակարդակի հասած է և կամ Ն. Ք. քանի դարեր առաջ ապրած է այս ցեղը: Գերեզմաններուն մէջ ասկիի և թանկապին քարերու գանձեր ալ գտնուած են:

Տր. Միլիքըն, ամերիկացի նշանաւոր բնագէտը փոքր օդապարիկներու մէջ շատ զգայուն և նուրբ դործիքներ պիտի գնէ և զանոնք մակերեսէն տասը մղոն վեր պիտի ղրկէ: Այս փորձերով պիտի ջանայ հասկնալու թէ ֆոզմիֆ կոչուած ճառագայթները ի՞նչ կը նշանակեն: Իր կարծիքին համեմատ այս ճառագայթները կը ցուցնեն թէ տիեզերքը միշտ կը վերաշինուի և արարչագործութիւնը միշտ կը շարունակուի, իսկ ուրիշ գիտուն մը կը խորհի թէ տիեզերքը կործանումի և կազմալուծումի գործողութեան ենթարկուած է:

Գերմանացի քիմիաբան մը ալիմիւնըմ մետաղին ուրիշ տարրեր խառնելով զայն թափանցիկ նիւթի վերածեց, որմէ անցնող լոյսը դեղին գոյն ունի:

Անգլիացի մը տեսակ մը չաքարէ պատրաստած է ապակի մը, որ սովորական ապակիի բոլոր յատկութիւններէն զատ ունի նաեւ արեւի անդրմանիւ շակային ճառագայթը անցընելու առաւելութիւնը:

Նշանաւոր Հոլանտացի աստղաբաշխ մը հսկայ Մաունթ Ուիլսոնի դիտարանին 100 մատնաչափ տրամագիծ ունեցող հեռագիտակով տիեզերքի մէջ զտնուող աստղերը համեմելով կ'եզրակացնէ թէ՛ տիեզերքը շարունակ կը փոխուի և տարուէ տարի թէ՛ իւր ձեւը և

թէ՛ իւր մեծութիւնը կը փոխէ: Իր անհամար հետազօտութիւններէն զըտած է թէ՛ տիեզերքին տարածութիւնը երկու և քսան երկիւրիոն լոյսի տարիներու միջեւ է: Նկատի ունենանք որ լոյսը մէկ մանրերկրորդի մէջ 186,600 մղոն կը ճամբորդէ:

Այժմ կայրերը ունէ գիրք կրնան կարգաւ շնորհիւ տեսակ մը մեքենայի որ photoelectrograph կը կոչուի: Ասոր հնարիչն է ֆրանսացի կոյր մեքենագէտ մը: Այս գործիքը տպագրեալ գրքին գիրերը մէկիկ մէկիկ ելեկտրական հոսանքով մը կ'առնէ և կը միացնէ կոյրին առջեւը դուռած տախտակի մը վըրայ, և կոյրը իր մատերը տախտակին վրայ դնելով կը կարդայ զայն:

Քորնէյլ համալսարանին աստղագէտները վերջերս թռչող աստղերու հոյլ մը (meteors) նշմարեցին որոնք

մէկ մանրերկրորդի մէջ 100 մղոն արագութեամբ կ'արշաւեն տիեզերքի մէջ: Կը կարծուի թէ՛ երբեմն աշխարհի վրայ ծագող փոթորիկները ասոնց արձակած քարերու դէզերուն հետեւանքն են: Աստղագէտները կ'ապացուցանեն թէ՛ աշխարհիս մէկ մեծ մասը շինուած է այսպիսի մարմիններէ և նիւթերէ, որոնք ծնունդ կ'առնեն տիեզերքի հեռաւոր խորշերուն մէջ:

Անգլիա վիթխարի օդապարիկ մը կը կառուցանէ որ Գերմանիոյ Նշանաւոր ("Do-x")էն ալ մեծ պիտի ըլլայ: Անգլիոյ նպատակն է իր իրկերն և Ամերիկայի միջեւ օդային ճամբայ մը շինել իր ճամբորդներուն արագ երթեւեկութիւն համար: Վեց մղիչ մեքենաներ պիտի քշեն սաւառնակը, որու կմախքը պողպատով զրահաւորուած է:

Քաղեց՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ՍՈՒՐԻՈՅ ԱՒԵՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՁ

Միութեան տարեկան ժողովը գումարուեցաւ Պէյրութ Հայ Աւետ. Ա. Եկեղեցիի սրահը, և տեւեց Մարտ 30էն մինչև Ապրիլ 6 իրիկուան ժամը 6: Ութը նիստեր ունեցաւ ժողովս՝ որուն նախագահեց Վեր. Ենովք Հատիտեան, ատենադպիր ընտրուեցաւ Պատ. Կ. Գըրգեաշարեան: 17 եկեղեցիներ և մասնաճիւղ եկեղեցիներ զրկած էին իրենց պատուիրակներն ու հովիւները: Ժողովի մասնակցեցան 13 ձեռնադրեալ հովիւներ, 4 արտօնեալ քարոզիչներ, 6 քարոզիչներ և 15 պատուիրակներ: Աղագետ փրոֆ. Զ. Պէզեհեան հանգստի պէտք ունենալով չի կրցաւ ժողովին մասնակցիլ: Ասոնցմէ դատ 13 պատուոյ անդամներ արձանագրուեցան: Ծիւնիի, Ֆարթըսլիի, Եօղուի-Օլուզի, Հա-

թաքիոյ և Տրիպոլսոյ աւետարանական համայնքները ուղղակի ներկայացուցիչներ չունէին: Միութեան այս 38 անդամներուն 11 միսիոնարներ միանալով կաղմուեցաւ համաժողովը, նախագահութեամբ Մր. Հ. Րիկզի և ատենադպրութեամբ Պատ. Արամ Հատիտեանի: Համաժողովը ունեցաւ 6 նիստեր, Մարտ 30-Ապրիլ 5, կէսօր: Աւանդական սովորութեան համեմատ կէսօրէ առաջ Համաժողովը և կէսօրէ ետքն ալ Միութեան ժողովը իրենց նիստերը ունեցան:

Համաժողովը լսեց 23 եկեղեցիներու տարեկան տեղեկագիրները. Կիպրոսի Հայ Երիցական եկեղեցիէն Տաթ. Ս. Մուրատեան, որ իբր պատուոյ անդամ կը մասնակցէր ժողովին, բեքանացի

տեղեկութիւններ տուաւ իր եկեղեցիին մասին: Մր. Ա. Քարլթըն Գոլէճի, Պատ. Տ. Խրլոբեան «Նոր Աւետարեք»ի, Մր. Հ. Րիկզ Ելեւմտական Յանձնախումբի, Վեր. Ա. Շիրաճեան Ազգապետարանի եւ Աւետարանչական յանձնախումբերու մասին կարգացին իրենց տեղեկագիրները: Մասնաւոր կոմիտէներ ասոնցմէ առաջին երկուքը ուսումնասիրելէ ետքը անոնց մասին իրենց դիտողութիւնները գրաւոր կերպով ներկայացուցին ժողովին, ուր երկար խորհրդակցութեան առարկայ եղան: «Նոր Աւետարեք»ի պէտքը աւելի ևս շեշտուեցաւ: Եւ Մր. Քարլթըն Գոլէճի մասին եղած հարցումներուն յարմար պատասխաններ տուաւ:

Վեր. Ենովք Կէօքկէօզեան համաժողովի կողմէ ընդհանուր քարտուղար ընտրուեցաւ (executive secretary), և որոշուեցաւ Վեր. Ա. Քասունիի առաջնորդութեամբ կազմել Կրթական յանձնախումբ մը, որուն պիտի մասնակցին Հալէպ Գոլէճի, Ամերկեան Աղջկանց Բարձր. Վարժարանի, Պէյրութի աղջկանց և մանչերու բարձր վարժարաններուն մէկ մէկ ներկայացուցիչները:

Համաժողովի յայտագիրին ամէնէն կարեւոր մասը կը կազմէին օրոշ նիւթերու շուրջ կարգացուած ճառերը և անոնց մասին եղած խորհրդակցութիւնները: Այս տարի ընդհանուր նիւթ մը չէր որոշուած: Չորս այժմէական նիւթեր չորս նիւտերու մէջ ժողովականներու ուղղորդութեան յանձնուեցան: Երկրորդ աւագրաւ նորութիւն մըն էր իւրաքանչիւր նիւթի մշակումը 2-4 տարբեր անհատներու կողմէ՝ փոխանակ միայն մէկի: Հինգ շաբթի օրուան նիւտին նիւթն էր մկրտութիւնը: Վեր. Ն. Սարեան «մկրտութեան նշանակութիւնը և կարեւորութիւնը» նիւթին մասին, Վեր. Կ. Հասէսեան «Մանուկներու մկրտութիւնը Հայ Առաք. և Հայ Աւետ.

եւտ. եկեղեցիներու մէջ» նիւթին մասին, Վեր. Հ. Հ. Րիկզ «Մկրտութեան հանդէպ ընդհանուր աւետարանական եկեղեցիներու դիրքը» նիւթին վրայ, Վեր. Ե. Կէօքկէօզեան «Պէտք է մկրտութիւնը ընդհանրացնել» նիւթին շուրջ կարճ ճառեր կարդացին: Ուրբաթ օրուան նիւթն էր անդամակցութիւնը, հետեւեալ բաժանումներով. — «Եկեղեցիի անդամակցութեան իմաստը», Վեր. Հ. Հ. Րիկզի կողմէ. «Եկեղեցիի անդամակցութիւնը անհրաժեշտ է», Վեր. Տ. Անդրէասեանի կողմէ. «Ինչպէս կրնանք անդամակցութեան մակարդակը բարձր պահել», Վեր. Ե. Հատեանի կողմէ: Շաբաթ օրուան նիւթըն էր «Ինչպէս կարելի է Եկեղեցիի սիրելի ընծայել», ասոր միջոցներուն մասին խօսեցան Պատ. Յովհ. Արգարեան, Վեր. Յկր. Շնորհօքեան, Վեր. Ա. Պէրպէրեան և փրոֆ. Զ. Պէզճեան (փլքֆէսորը բացակայ ըլլալուն իր յոգուածը կարգաց Վեր. Ե. Կէօքկէօզեան): Ասոնց նիւթերն էին՝ կարգով. — Ընկերութիւններ և այլազան հաւաքոյթներ, Քարոզիչին մշակութային մակարդակը, Բեմերու առժամեայ փոխանակութիւնը, Քարոզիչին անձնաւորութիւնն ու քարոզը, Երկու շաբթի օրուան նիւթն էր «Մեր եկեղեցիներուն անտեսական պայմանները», որուն մասին խօսեցան Վեր. Ս. Ս. Մանուկեան և Տօքթ. Ֆ. Յովնանեան, որոնցմէ առաջինը խօսեցաւ «Ինչ կրնանք ընել հիմա մեր եկեղեցիներուն տնտեսական դժուարութիւնները լուծելու համար» նիւթին վրայ, իսկ երկրորդը՝ «Ինչ կրնանք ընել մեր եկեղեցիներուն ապագան ապահովելու համար տնտեսապէս» նիւթին վրայ:

Միութեան ժողովին մէջ տրուած կարեւոր որոշումներն են.

1. Հալէպի մէջ նորակազմ Գ. Հայ Աւետ. եկեղեցին Միութեան իբր ան-

դամ ընդունել: Եկեղեցւոյս հովիւը Պատ. Յ. Զաքարիան, որ ներկայ էր, իբր բնական անդամ հրաւիրուեցաւ ժողովի մասնակցելու եւ անոր ժողովուրդէն Տիար Սարգիս Լալէեան պատուոյ անդամ ընդունուեցաւ:

2. Սրբազրեալ նոր եկեղեցական ներքին կանոնադրի հաստատումը:

3. Սքուլ ալ Րիլիճընի չորս ուսումնաւարտներու, Յովհ. Աբգարեանի, Յակոբ Զաքարիանի, Արամ Հատիտեանի եւ Տիգրան Ծ. Ուրլոբեանի, յետ հրապարակաւ քննութեան արտօնեալ քարոզիչի իրաւասութիւն տրուեցաւ:

4. Ամերիկայի Հայ Աւետ. Միութեան կողմէ եկած նամակի վրայ միջմիութենական յարաբերութեանց մասին Ամերիկայի Միութեան հետ թըղթակցելու համար երեք անձերէ բաղկացեալ մասնախումբի մը կազմութիւնը:

5. Պարագաները եւ տեղական պայմանները նկատի առնելով եկեղեցիներու եւ Միութեան մէջ գործելու համար այրերու եւ կիներու հաւասար առիթ եւ ձայն տալու մասին եկեղեցիներու յանձնարարել:

6. Պատկի եւ ամուսնալուծումի հարցերը ուսումնասիրելէ ետքը տեղեկագիր մը պատրաստելու համար մարմին մը ընտրել:

7. Կիլիկիոյ կաթողիկոսութեան հետ սերտ եւ մտերմական յարաբերութեան մշակումը: Միութեանս կողմէ 8 անդամներէ բաղկացեալ պատուիրակութիւն մը որոշուեցաւ Անթիլիաս երթալով Միութեանս բարեմաղթութիւնները ներկայացնելու աթոռակից Հայրապետներուն:

8. Անորոշ ժամանակի համար Ազգապետարանի հարցին լուծումը յետաձգել:

Ամէն առաւօտ նիստերէ առաջ հոգեւոր պաշտամունքներ կատարուեցան

առաջնորդութեամբ զանազան անձերու: առաւօտ մը խօսեցաւ Պարսկաստանի միսիոնարներէն Եպիսկոպոս Լինդըն Պարսիկ խալմներու մէջ աւետարանչական յաջող գործունէութեան մասին, որ այնքան յուզեց եւ հետաքրքրեց ներկաները: Եպիսկոպոս Լինդըն նոյն նիւթի մասին Ապրիլ 3, Կիրակի առտուն խօսեցաւ Էջրէֆիէյի Հայ Աւետ. նորակառոյց հոյակապ դպրոցական սրահին մէջ, որուն երկրորդ յարկը պիտի շինուի եկեղեցական շէնքը: Ինչպէս արդէն ծանօթ է շէնքս կառուցուած է ի յիշատակ հանգուցեալ Միսիս Էմմա Պարնըմ Րիկզի, նոյն անունով պատրաստ գումարով մը: Մասնաւոր հրաւերով խօսեցան նաեւ Տր. Հարցլըր «Բըրիստոս Հին Կտակարանի լրումն է նոր Կտակարանի մէջ» նիւթին շուրջ եւ Մր. Նիքըլ «Բրիստոս» հոգեւոր գործունէութեան առանցքը» նիւթին վրայ: Միութեան վերջին նիստի մէջ համակրալից խորհրդակցութեան առարկայ եղաւ Գահիրէի եկեղեցիին հովուական ծանօթ խնդիրը, եւ որոշուեցաւ մասնաւոր կոմիտէի մը կողմէ խմբագրուած եւ ժողովէս հաստատուած նամակը ղրկել խընդիրին վերջնական լուծումը յետաձգելով մինչեւ յաջորդ Միութեան ժողովին: Ապա Վեր. Ե. Հատիտեան ամփոփ եւ կուռ եւ այնքան գեղեցիկ կերպով յայտնեց այս տարուան ժողովին հոգեւոր պատգամները: Կարճ եւ գեղեցիկ պաշտամունքէ ետքը ժողովականները իրարու հրաժեշտ տուին:

Այս տարուան ժողովէն մեր կրած տպաւորութիւնները պիտի յայտնենք յաջորդ խմբագրականով:

Տ. Ճ. Ս.

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՀԱՅ Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Բարեգործականի ընդհանուր տնօրէնութեան կողմէ զրկուած Ապրիլ 4 թուականի գրութենէն կը քաղենք. —

Նրեանէն Միութեան ուղղուած հեռագրին համեմատ ճերգաղթողները առանց բացառութեան տեղափոխուած են Հայաստանի ճարտարարուեստական և հողագործական կեդրոններու մէջ միայն, և կառավարութիւնը անոնց հանգըտին համար ամէն միջոցի դիմած է:

Ներգաղթի երրորդ կարգաւանի թուական որոշուած է Ապրիլ 20:

Այս տարի Նուպարաշէնի մէջ շինութիւնները մեծ փութով յառաջ պիտի տարուին որուն համար կառավարութիւնն ևս մէկ միլիոն ուրիշ որոշած է է պետական պիտոճէէն: Զուրի ճամբաներու համար 10,0000 մէթր պողպատեայ խողովակներու ապսպրանքը Բարեգործականը պիտի գործադրէ անմիջապէս:

Բանաստեղծ Տիար Ա. Զօպանեանի Պուքրէշ այցելութեան առթիւ Միութեան գործին մասին խօսած է «Պուքրէշի և Քոնսթաննուպոլի Տեղ. Մասնաժողովներուն կողմէ սարքուած թէյասեղանին և ժողովրդային հանդէսին մէջ, ստեղծելով մեծ ոգևորութիւն»: Պուքրէշի Մասնաժողովը վերակազմուած է:

Դիւանը հրապարակ կը հանէ «Մեր խօսքը հայ ժողովուրդին» տետրակը, որ փափաքողին ձրի պիտի տրուի:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՒԵՏՐԶ.

ԸՆԿԵՐԱԿԹԵԱՆՍ «ԼՐԱՏՈՒ» ԹԵՐ-

Ընկերակցութեանս «Լրատու» թերթէն կը քաղենք. Թերթը այս անգամ

մեքենագրուած եւ անգլիերէն լեզուով լոյս տեսած է սահաւաթիւ օրինակներով:

Աւետչ. Ընկերակցութիւնը 1926 Նոյեմբերէ մինչև 1932 Մարտ 66 հազար տոլար ծախսած է, որուն միայն 8000ը փոխ առնուած է Ամերիկեան Պորտէն: 1931 Յունիս մէկէն մինչև 1932 Մարտ իր մուտքը հաւասարած է 5000 տոլարի, որ անցեալ ելեմտական տարուան նոյն շրջանի մուտքէն (4170 տոլ.) աւելի է:

Ընկերակցութեան վերջին տարեկան ժողովին մէջ որոշուած է որ Ամերիկայի իւրաքանչիւր եկեղեցին դաշտի մէջ որոշ գործի մը նիւթական պատասխանատուութիւնը ստանձնէ: Ֆիլատելֆիայ Հայ Մեթոտական եկեղեցին Սեւանիկի մէջ կին աւետարանիչի մը, Պոսթոնի Կիլիկեան եկեղեցին Պէյրութի մէջ նորաշէն Հայ թաղի գործին հոգը ստանձնած են: Իսկ Փրազիտէնսի, Պոսթոն Ա. Աւետ. և Նիւ Եորքի Հայ Աւետ. եկեղեցիները մէկ մէկ նախակրթարաններու նիւթական պատասխանատուութիւնը յանձն առած են: Նոյն ժողովին մէջ որոշուած է նաև Մարտ 6ի Կիրակին իւր Աւետարանչականի Կիրակին հոշակել և եկեղեցիները հրաւիրել նոյն օրը յիշել իբր այդ: Ընկերակցութիւնը մեծապէս գոհ մնալով ընդհանուր քարտուղար Տր. Ե. Հատիտեանի մէկ տարուան գործունէութենէն նոյն պաշտօնով մէկ տարուան համար ևս հրաւիրած է զայն:

ԺԱՄԱՆՈՒՄ

Ն. Ս. Օժտութիւն վեհ. Սահակ Կաթողիկոս Ապրիլ 15 ին Անթիլիասէն Հալէպ ժամանեց: «Հասկ» ի գրածին համեմատ ծերունազարդ հայրապետը, որ տակաւին քաջառողջ է հակառակ 83 տարիներու ծանրութեան, մի քանի ամիսներ պիտի անցնէ քաղաքս և շըրջակայքը օդափոխութեան նպատակով:

ՀԱԼԷՊԻ հայ Առաք. համայնքը յուս-
կումնալից շրջան մը կ'ապրի տոնէն է՝
միլիոն Գաւառականի ընտրութեանց
առթիւ: Սաստիկ և տգեղ ընտրական
պայքար մը անհանգիստ կ'ընէ բոլոր
հայութիւնը: Կուսակցութիւնները ի-
րենց բոլոր աշխարհ շարժման մէջ դը-
րած են, որոնք նոյնիսկ փողոցներու
մէջ բազմութեան կ'ունենան. արդիւնքը
ծեծ, զէնք և արիւն: Կուսակցական
պետեր առաջնորդարան հրաւիրուելով
խրատուած են չափ մը դնելու իրենց
ծայրայեղ մոլուցքին, իցիւ թէ խրատ-
ուէին:

ՀԱՅԵՐ Հատ մը տեղեր վերջնական
բնակութիւն տակաւին չեն հաստա-
տած: Ֆրանսայէն կարգ մը Հայեր կը
պատրաստուին Թուրքիա վերադա-
նալ, իսկ ուրիշ Հայեր կը փափաքին
Հայաստան երթալ: Ներգաղթի պաշ-
տօնեայ Դ. Շահվերտեան Պուլկար կա-
ռավարութեան կողմէ արտօնուած է
Պուլկարիա մօտիկ ներգաղթի կտրա-
ւան մը կազմակերպելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ շինուած ջրանցք-
ները և ոռոգուած տարածութիւնը: Շի-
րակ՝ 11,800 հէքթար հող, փոքր Սար-
տարապատ՝ 25,700 հէքթար, Այդըր
լիճ՝ 6,200, Կարճեւան՝ 1,300: Ղա-
բու մէջ 51,000 հէքթար հողը ոռոգելու
ծրագրին կէսը աւարտած է 8 միլիոն
350 հազար Ռուբլի ծախսելով:

ՊԸԼԾԻ, Ռումանիա, հին բնակիչներ-
էն այրի տիկ. Ե. Բորով հայոց եկեղե-
ցիին կտակած է մէկ միլիոն լէյ արժող
տուն մը:

«ՄԱՐՍԷՅԸ ՄԱԹԷՆ» Թերթին համե-
մատ Մարտէյի մէջ 15, 572 Հայեր
կ'ապրին: Զանազան երկիրներու հը-
պատակ արձանագրուած Հայերով ընդ-
հանուր թիւը կը հասնի 25, 000 ի, կը
գրէ «Հ. Կոչնակ»:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ, տարաբախտ
երաժշտագէտը, որոշած են ֆրանսայէն
Կ. Պուլիս փոխադրել, անկարելի գտնե-
լով անոր զարմանումին ծախքը հո-
գալ:

ՓԱՐԻԶԻ Հայ Առաք. Եկեղեցական
չէնքին եւ մատակարարման գրամին
սեպհականատէր դառնալ ուղած են՝
հանգուցեալ միլիոնատէր բարերար
Մանթաշեանի ժառանգորդները՝ Նիւ-
թական նեղութենէ դրդուած: Շէնքը
տակաւին ազգին անուան չէ փոխա-
նցուած:

ԹՐԺԱՀԱՅՈՑ առաջին թերթը «Լրոյ
Դիր» հրատարակուած է ասկէ 100 տա-
րի առաջ Կ. Պուլսոյ մէջ, հարիւրամ-
եակը լրացած է 1932 Յունվ. 26 ին:

Կ. ՊՈԼՍՈՑ մէջ կարգ մը Հայ դըպ-
րոցներ որոշած են Ապրիլ 15-22 Պէր-
պէրեան Շաբաթ մը տօնել, հանգուցեալ
մեծ գաղտնարակին մահուան 25 ամ-
եակին առթիւ: Հանդէսներէն ետք
յիշատակարան մը պիտի պատրաստուի:

ՏԻԱՐ ՆԵՐՍԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ, երկ-
տըրական ճարտարագէտ, նաւաշին բա-
ժանմունքի մէջ գլխաւոր շրջայնինկ Տը-
րեքսեանի պատասխանատու և կարե-
ւոր պաշտօնը կրցած է ստանալ պահան-
ջուած խիստ քննութիւններէն անցնե-
լով, որոյն պաշտօնին համար 3000 հո-
գիներ գիմած են, կը գրէ «Հ. Կոչնակ»:

ՄԱՐՍԷՅԸ Ի արուարձաններուն մա-
տուռները գրաւի տակ են, աւելցած
պարտքերու տոկոսները վճարուած չըլ-
լալուն, կը գրէ «ժողովուրդ» թղթա-
կիցը Մարտէյի: Խորասանճեանի բա-
րերարութեամբ շինուած նոր եկեղե-
ցին ևս գոյուելու վտանգին մէջ է՝ յա-
ռաջ եկած լարեալ վիճակին պատճա-
ռաւ: Խորասանճեան սպառնացած է
զայն կղպել և բանալին գրպանը դնել:

FURST MNESS Ի ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նշանաւոր են իրենց մաքրութեամբն աւ շինիչ ազդեցութեամբը,

աւստի

տնարիւններ, տկարներ, հիւանդութենէ և վիրաբուժական գործողութենէ
նոր ապաքինողներ, պէտք է գործածեն**Furst mcness'****EXTRACT OF GOD LIVER OIL TONIC**Կոչուած բաղադրութիւնը, որ կը պարունակէ մաքուր ձկան իւղ (կենսահիւթ
«Ա» և «Դ»), մալթ, վայրի կեռաս, քինին, ընտիր դինի, երկաթ, մանկանէզ,
և այլն:Մեծապէս ԱնործԱՀԱՄ է, ԱՐԻՒՆԻ ԿԱՐՄԻՐ ԳՆԴԻԿՆԵՐԸ ԿԸ ՋՕՐԱՑՆԷ
ընդհանուր ՄԱՐՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԿՈՒԺՈՎՑՆԷ:**ՀԱՁ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ԶԱՓԱՀԱՍՆԵՐ**

պէտք է գործածեն

Mcness mentholated cough syrup

Բաղադրութիւնը,

կը պարունակէ զանազան ծառերէ, բոյսերու արմատներէ քաղուած հիւթեր և
մենթոլ:Բորբոսած եւ գրգռուած կոկորդի քաղանքներում վրայ կ'ազդէ, կոկորդը եւ
խոչափողը կը մաքրէ եւ «կ'իւղոսէ»: Ախորժախամ եւ անուշ է:

ԿԸ ԴՏՆՈՒԻ ԲՈՂՈՐ ՅԱՅՏՆԻ ԴԵՂԱՐԱՆՆԵՐԸ

 صاحب الامتياز والمدير المشول القس ق. هاروتونيان
